«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
ք. Դիլիջան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝ + 374 10 592762, + 374 94 543707
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

Մայրենի
3-րդ դասարան

Կարդա՛ տեքստը և պատասխանի՛ր հարցերին։

Ծիտն ու ծիծեռնակը

Ծիծեռնակը նոր էր վերադարձել տաք երկրներից։ Նա ուրախ-ուրախ բույն էր հյուսում տան կտուրին։ Ծիտը հեռվից հետևում էր նրան։ Երբ մեկ անգամ ևս ծիծեռնակը թռավ փոքրիկ շիվերի հետևից, ու բույնը դատարկ մնաց, չարաճճի ծիտն արագորեն մտավ ծիծեռնակի նոր հյուսած բույնը։ Քիչ անց նա գլխիկը հանեց ու սկսեց ուրախ ծլվլալ։

Աշխատասեր ծիծեռնակը վերադարձավ, տեսավ ծտին, թևերը բարկացած թափահարեց ու հեռացավ։ Հետո նա վերադարձավ մի քանի ծիծեռնակների հետ։ Ծիծեռնակները խմբով հարձակվեցին ծտի վրա։ Նրանք դուրս շպրտեցին ծտին իրենց ընկերոջ բնից։ Չարաճճի ծիտն արագ հեռացավ։ Ծիծեռնակները խաղաղվեցին։

1. Ինչպե՞ս ծիտը կարողացավ գրավել ծիծեռնակի բույնը։ [10] Վ20

_____

_____

_____

2. Ինչպե՞ս ծիծեռնակը ծտին հեռացրեց իր բնից։ [10] Վ20

_____

_____

3 ա) Մեկ բառով բնութագրի՛ր ծիծեռնակին։ [6] Վ5

_____

բ) Մեկ բառով բնութագրի՛ր ծտին: (6) Վ5

---

4. Շարունակի՛ր նախադասությունը: [8] Վ9

Ծիծեռնակները խաղաղվեցին ու

_____

_____

_____

5. Տեքստից դո՛ւրս գրիր տրված բառերի հոմանիշները: [12] Վ6, Վ7

Տանիք - _____

աշխույժ - _____

զվարթ - _____

հանդարտվել - _____

6. Տեքստից դո՛ւրս գրիր տրված բառերի հականիշները[12] Վ6, Վ7

Լիքը - _____

մոտենալ- _____

ծույլ - _____

դանդաղ - _____

7. Ըստ այունակների՝ տրված բառաշարքից առանձնացրու՛ առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառերը. [12] Վ24

հարձակվել, ծիտ, ծիծեռնակ, չարաճճի, թափահարում է, աշխատասեր:

առարկա	հատկանիշ	գործողություն

8. Միացրու՛ բառերին համապատասխան ածանցները՝ -ակ, -իկ, -ուկ, -ենի, -ուհի, -եղեն: [12] Վ10, Վ15

ջուր -_____

տուն - _____

խմոր - _____

աշակերտ - _____

ձի - _____

սալոր- _____

9. Ավարտի՛ր միտքը 2-3 նախադասությամբ: [12] Վ9

Երբ մարդիկ բարի գործեր են կատարում,

_____

_____

_____

_____

_____

_____

_____